

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 23

6 ՕԳՈՏՈՈ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լոնկիեյլո (Ուսումնասիրութիւն) ՏԻԳՐԱՆ ԵԼՔԵՆՃԵԱՆ.—Գրական բարեր. ԵՆՈՎՔ ԱՐ՝
ՍԷՆ.—Մահուան հեռանք (Բանաստեղծութիւն) Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ.—Բժօկական Գրո-
նիկ. ՏՈԹԹ. Տ. ԱԼԼԱԶՎԷՐՏԻ ՈՐԻԻ.— Խմբագրական նօթեր.— Միջազգային արձագանգ:

ԲԱԺԱՆ ՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 ֆրանկ կամ 5 բուլղի: Թղթաստացիներն ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առօրէ:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռն-Քէ. ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیہ غلطہ (ماسیس) غزتی سی ادارہ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաբուսական թիվ

Թեև, որ այսօր գրեթե բոլոր ժողովրդաց գլխավոր ըմպելիս դարձած է, ա՛յնքան բաղաժաթիլ առաջնորդներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ առաջնորդներէն մասնք նշանուար են իբր Երեսփոխան հալապցի, մասնք ալ թէեւ նոյնքան Երեսփոխան հալապցի, գերազանց են սակայն իբր կադրուրիէ եւ գործակալի: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իւր ուրոյն լաւութիւններն ունին որոնք զինքը կը գանգաւորեն ուրիշ, առաջնորդներէ:



Սակայն կալ թէյ մը, որ այդ լաւութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համահա եւ մանուշակ կաշ, դուրիշ եւ գործակալի մանուշակայն, ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքոնի թէյը, որ այդ լաւագու-

թեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Եւրոպական եւ Իսպանական թէյի մեծ վաճառատունը, իր բաղաժաթիլ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաշակեալ գույն թէյ մասնաւոր եւ դսկական աւափերով ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր անոնք, որ կը փափաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկաւան, չինական, Սէլան եւ Զափալի մանուշակ թէյեր: 10—10

Ուսանողութիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնակաբու (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարուան գործունէութեամբ մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յորդոյ յաճախողներուն թէ բնակարանը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18: Ի՞նչ որ վերաբերեալ իւր մասնագիտութեան կը բուժէ նաեւ նորագոյն մէթոտներով չղային եւ հոգեկան ու երեւակայական ամէն առաջ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթիկ եւ tic անուանուած ալքերի երեսի եւ ռուսիալ ազգի եւ Կապուս շարժումները եւ դաշտանի դաղորումէ յառաջ եկած չղային խռովումները եւ օրիասարգական մօլիքները, ինչպէս նաեւ գինիմօլիքը, մօրիֆնամօլիքը եւայլն: Կիրակիներէն դառ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբաթ օրերը ձիւբօր կը դարմանէ վկայաւ աղքատները: 10—10



ՅՈՎԱԿԻՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)

ՍՏԱՄԵՆԱՐՈՅԺ

Մուշաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Ինսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61

Զըրաֆեան արարքման

Պալպալեան ամէն օր ակոյալի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի: Իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած ակոյաները: Յորեկները ակոյալ քաշել տալու համար օրօշ վարձք մը չկայ: Քաշել տալուն կամքէն կախեալ է: Վկայեալ առամաքու ժուհի Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն դարմանատան մէջ: Աղփայեցեալն ձրի 10—10

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐՇԷ ԶՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՈԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Ակիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Ակիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւնն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ԶՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳՂՈՒՄ ԵՒ ՊԱՀԵՍ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74% . որով ՔԷՍ ԲԱԳԵՐՆԵԼԻ ընծայած երախտաբուծները գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տալած երախտաբուծներէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ծրանսայի մէջէն նշանաւոր դատաւորներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՄ. Արեւմտեան Ծրանսայի երկաթուղեայ ընկերութեան եւ Քոէտի Լիօնէի վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՐ. Դաւանադրանդի ընկերութեան վարչական Խորհուրդ, անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԶԷՄ. նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ. Ընդհ. Տնօրէն Քոէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Ք. ՄԱՏՈՒՄՄԱՏՈՒՐ

Պոլիս. Սուլթան-Համադ. Բաւաթ Բաթրոնոզու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քոէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ.—Շահաւոր դիմել պիտի տուի այն քննիչին որ կարելու արդիւնք մը ի ազորմամբ քլայ անձնապէս:

3—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՍՈՒՍՈՒՆ

Ամեն ճեսակ քօնաֆիլիս ապրանց

Մեծ-Շուկայ, Քիւրքճիներու դրան կից, Թ. 41—43

Նոյնպէս, արանց եւ կանանց ճաշատուար հովանոցներու վաճառատուն, Պոլիս. Սուլթան-Համադ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները. թէ՛ Թօնաֆիլիս վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց տաւկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը փոխեն տեղեւորութիւն, եւ դիւրամատուցելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Առամ վարդան մեծապէս զօն Թաղուցած է իր բազմութիւն յաճախողները:

պէտք է որ Շուկայ ելլող մէկն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հազալու համար:

3—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՄԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ դատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձանէ ստամոքսի, աղեաց, միզային ճանրաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, հին եւ նոր դադիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նարագայն մեթաներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի միւս օս կէս օտէ վերջը 2 արեքշաբթի օրերը միայն ձրի: 3—10

Եթէ երախայ մը նիհար է և չի զաւայրնէ, ախորժակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նէ, և ակոսայները — որոնք չեն մեծնարկոր նէ — որ բնականապէս միւս աղետները կ'աւելցընէ թող իրեն արուի.



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար ախորժակի կերակուր և դեղ մըն է, և երախայն զայն խմած ատեն վերջի աստիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Մայրը շուտով կը տեսնէ թէ ինչպէս երախային բոլոր վիշտերը անմիջապէս կը դադրին, որպէս թէ նոր արիւն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները չնչելով՝ մանկան ախտերը առողջութեան և զուարդութեան փոխադրեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուսելիք և) քմայելիքին և ախորժակով կրիմէ: Կրակոյի զաւայրէ և պղտիկ ձերմակ ակոսայները առանձնաւոր և վիշտերու կ'ընկնին երեան ելլել: Ըսգօթի Բաղադրութիւնը երախայից առողջարար գիրութիւն և զաւայրում կուտայ, մարսողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւն կը պատճառէ:

ԸՄԿՕԹԻ ԲԵՂԱԹՐՈՒԹԻՈՒՆ

Բոլոր տղայոց Սիրելին է և զանոնք շուտով վարդապոյն երեւոյթի և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փոխէ: Ըսգօթի Բաղադրութիւնը վրան այս նշանով վարդապոյն փաթեթի մէջ ծաւրած շիշերէն կը ծանցօնի:

Շիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղադրութիւնը և քեղածածկները և ծածկերը:

20

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս ինչ. ասոր, զմեզ կը սկսի սեպտեմբեր 6րէն (Ն. Տ): Հաստատու. թեան Տնօրէն վեր. Ռ. Ջէյմսըրը եւ իր Տիկինը արդէն վերադարձած են իրենց երկամեայ բացակայութենէն եւ յառաջիկայ ասոր սեպտեմբերի խումբին վրայ կ'աւելնան Բանաստի մէկ նշանաւոր համալսարանէն երկու Ամերիկացի չրջաւարաններ որոնց մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ առեւտրական դասընթացը: Աշակերտները ընտանեկան խնամք կը վայելն գիշերօթիկ սեպտեմբերուն, հաստատութեան մասնաւոր բժիշկին հրահանգներէն եւ արկին Ջէյմսըրի մայրական հրահանգներէն առկա: Գիշերօթիկ աշակերտներուն տարեթաւան է 16 օսմ. սովի, 8 սովին սեպտեմբերին սկիզբը եւ մնացած 8 սովին յունուարի վերջերը վճարելի:

Վարժարանս յառուկ սեպտեմբերի մը ունի զործիական երաժշտութեան համար եւ այս դասին ասորիկան մասնաւոր վճարումն է 1 օս. կէս սովի օսմ:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր. Բիթի, Պալպր, Հասու, Կ. Պոլիս. կամ Տնօրէնութեան՝ Պարտիզակ: 2—6

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՒԼԷՃ ԱՂԶԱՆՑ ՍԿԻՏԱՐ

Վարժարանիս յառաջիկայ ասոր, զմեզ կը սկսի Սեպտ. 15րէն: Գիշերօթիկ աշակերտակները կը սպասուին 14ի երեկոյին: Հաստատութիւնս մեծ բարեկամ կրած է կեդրոնական Գեուրիի եւ հազի ներմուծումէն եւ նոր բաղնիքին շինութենէն ի վեր որ մայրաքաղաքի մէջ գտնուածներուն աւելէն բնաթիւն է:

Համարժեանքի ի նկատ կ'աւելնի Հայ դպրոցներու մէջ կատարուած գործը, որպէս կը ներկայացուի այն՝ բերուած վկայականներով: Գրառար եւ աշխատաւոր Հայերէն Եւրոպայի խնամով եւ հաստատուպէս:

Գոյէճն ունի երաժշտութեան զօրաւոր ճիւղ մը. ուր կ'աւանդուին դաշնակ, երգիչ, ցուլ, օրգանի եւ երգի դասեր: Եւրոպիկայ ասորի մասնաւոր աշխատութիւն պիտի ուլա, նաեւ զծաղրութեան եւ նկարչութեան: Դարձեալ, սեպտեմբերին կ'աւանդուի ձեռագրաւ թիւն, մեքենայով գրել, քաղաքութիւն եւ առեւտրական թղթակցութիւն:

Աւելի տեղեկութիւն խնդրողներ իրենց նամակները Գոյէճին Նախագահին եւղղելու են աւանդով. Dr. Patriok. c/o British Post Office, Constantinople. 2—6

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 23

6 ՕԳՈՍՏՈՍ 1905

ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼՈՆԿՖԵԼԼՈ

Անգլիական քաղաքի հանճարի յորդ և պայծառ գեղման դարագլուխ մ'էր արդէն, երբ ծնաւ Լոնկֆելլօ Ամերիկայի մէջ: Պայ-
րըն, Շէլլի, Սքոթ, Մուր, Բից, և այլն, աւագախումբն անգլիական մտաւորականութեան, փայլած էին կամ սկսած էին փայլիլ նոյն թուականներուն: Իսկ Լոնկֆելլօյի և Թէնիսօնի ծննդեան թուականներն հազիւ երկու տարւոյ տարբերութիւն մ'ունին: Եօթնութն տասնամեայ էր Լոնկֆելլօ՝ երբ մեռաւ Պայրըն, և տասնըհինգ տարեկան՝ երբ Շէլլի թողուց կեանքը: Հազիւ տասնըոտս տարեկան էր ինք, երբ մուտ գործեց ամերիկեան գոլէճ մը, և չորս տարուան շրջանէ մը վերջ՝ ընթացաւարտ եղաւ 1825ին, այսինքն երբ տասնեութ տարեկան էր: Դպրոցէն իսկ սկսած է տաղաչափեալ գրութեան հեղինակել և զրկել ժամանակակից գրական թերթերու: Իր ծնողքը չէին հաճեր իր գրագէտի հակումներուն, և հեռի չէր ժամանակը՝ ուր պիտի սկսէր ծայր տալ յայտնութիւնը հօր և որդւոյ ալլամիտութեանց: Հանճարի զարթոնմն սկսած էր իր մէջ, և անընդհատ աշխատութիւն և հետապնդող բնաւորութիւն մը պսակեցին իր շարունակական յաջողութիւնները, և զբիւր զինք ամերիկածին բանաստեղծներու առաջին կարգին վրայ, ուր մնաց՝ առանց բնաւ գլորելու՝ 75 տարիներ՝ մինչև 1882, որ իր մահուան թուականն է: Իր պատանեկութիւնն անցուց իրաւագիտական ուսմանց պարապումներով, ինչպէս տընօրինած էր իր հայրը, մինչև որ երեւան եկաւ թէ կը պակսէր իր մէջ բնաբոյս հան-

ճարն առ այդ: Մեղմիկ զգացողութիւններ, կամ այն է՝ փափուկ սրտի մարդը կ'ապրէր իր մորթին տակ, քան տպագայ օրէնսգէտն ու դատաստացը, որուն ընդածին պէտք էր ըլլալ խիստ ու կարծր կորովը դատողականին: Իր հակամիտութեանց այս յայտնութիւնը պատճառ եղաւ որ իր հայրը հրաժարի չուտով իր նախասիրութիւններէն, և Լոնկֆելլօ բարեբախտ եղաւ անոր համար որ հայրական ու որդեկան տարբեր ճաշակներու միջև բախում տեղի չունեցաւ: Գրական մարդն ի վեր երեւեցաւ, և բաւականաչափ պաշարը լեզուագիտութեան, զոր համբարած էր վարժարանի մէջ և անկէ դուրս, պատկառելի չափի մը հասնելով, բարձրացուց զինք ուսուցչութեան աստիճանին, նոյն իսկ այն վարժարանին մէջ ուր իր պատանեկութիւնն անցուցած էր: Վարժապետ, գրագէտ, բանաստեղծ — և քիչ մ'ալ իրաւագէտ — Լոնկֆելլօ եղած էր բազմապատիկ անձնավորութիւն մը: Հետաքրքիր խուզարկու միտք մ'եղաւ, հաղորդական ոգի մը՝ որ իմացական սահմանին մէջ գիտցաւ տալ այլոց և առնուլ այլոցմէ ինչ որ կարելի էր տալ և առնուլ: Եւրոպեան մեծացամաքին (continent) անհուն անջրպետութիւնն՝ որ իր ժամանակին մեծապէս կ'ազդէր իր բնիկ երկրին արտաքին հաղորդակցութեանց վրայ, կարող չեղաւ հեռի պահել զինք հին աղգաց մտաւորական լոյսերէն, և լոյսի այդ ծարաւը մղեց զինք ճամբորդել կրկին և կրկին ովկիանոսին վրայէն դէպ ի կեդրոնները կանխագոյն քաղաքակրթութեան: Մէն մի եւրոպական

ուղեւորութենէ վերջ կը բարձրանար իր հեղինակաւոր դիրքն իր բնավայրին մէջ. վասնզի կը վերադառնար մտքի և սրտի նորանոր տպաւորութիւններով: Ամերիկեան զարգացումը, որ արդէն նշանաւոր եղած էր իր մէջ իբրեւ բնիկ հանգամանք, կրնար դեռ կարօտ ըլլալ արտաքին մշակութեանց, մանաւանդ ասկէ դար մը առաջ: Իր դեգերումներն ոչ միայն բազմակողմանի հմտութեան և փորձառութեան դասեր տուին իրեն, ոչ միայն անցուցին իր մէջ ազնուական ճաշակները, այլ և ծանօթ ըրին զինք այն երկիրներուն որոց այցելած էր: Ամերիկեան բանաստեղծներէն թերեւս Լոնկֆելլո միայն է որ ծանօթագոյն է հին աշխարհի: Հուրդմէն անգամ որ իբրեւ բուն ամերիկեան բանաստեղծ այլապէ՛ս մեծ դէմք մ'է, տիեզերական համբաւի մասին չի հաւասարիր Լոնկֆելլոյի: Իբրեւ բախտաւոր բանաստեղծ՝ առաջինն է սա իր հաւասարակիցներուն մէջ. իբրեւ պաշտօնի մարդ՝ դարձեալ նոյնպէս: Մինչեւ իսկ Հարվարտի համալսարանին մէջ, Նոր լեզուաց եւ Գեղեցիկ Դպրութեանց ուսուցչութեան պաշտօնն իրեն վիճակեցաւ, երբ 28 տարեկան էր: Բայց այս բարձր պաշտօնը միացուցած էր արժանիքի հետ: Իր անձնական նկարագիրն ազնիւ եղած է միշտ, միշտ անկեղծ, միշտ պատուաւոր: Եթէ զանազան ժողովրդոց հետ յաճախաւոր շփումներու պատճառաւ քիչ կամ չատ ազդուած չըլլար օտար բարքերէ, թերեւս աւելի բացերեւ պիտի ըլլար իր անձին վրայ դրոշմը բնաւոր բարոյասիրութեան: Գրեթէ քսան տարի անընդհատ շարունակեց իր պաշտօնը Հարվարտի հաստատութեան մէջ, որմէ վերջ բոլորովին քաշուելով՝ մտաւ առանձնական կեանքի մէջ: Բարի եւ ժողովրդական մարդն եղած էր, եւ այնպէս մնաց միշտ:

Իբրեւ ճշմարիտ բանաստեղծ, այսինքն իբրեւ հանճար որ յղացումը կը միացնէ իրագործութեան հետ, մին է, ամերիկեան չափազանցեալ տուչութեանց համեմատ, բոլոր աշխարհի գերագոյններէն: Իսկ աւելի տիրական քննադատներու կարծեօք, ոչ միայն բոլոր աշխարհի, այլ եւ նոյն իսկ ամերիկե-

ան բանաստեղծներու սուղ չըջանակին մէջ բացարձակապէս յառաջադասը չէ: Ողջմտութիւնը կը թելադրէ հաւատալ միայն երկրորդ կարծիքին: Նոյն իսկ ինք կարծես թէ չունի անզուգական ըլլալու յաւակնութիւնը, այն խրոխտութիւնն որ յատուկ է միայն անկախ հանճարներու՝ որք իրենց ինքնաբաւ զօրութեան վրայ յեցած՝ փոխ չեն առնուր օտարէն: Իր բանաստեղծի խառնուածքին մէջ, ուր նուազ է անակնկալն ու հրաշալին, ճշմարիտ ներշնչումն երբեք հրաբորբօք վառարան մը չէ եղած, թէեւ բաւական ջերմիկ եւ սփոփարար ծոց մ'ունի, որբելու եւ ողորդելու համար բոլոր պարկեշտ ու գոհացող հոգիները, որք չափաւոր եռանդնութիւններէ միայն կ'ախորժին: Հսկայ քերթողներու կարգ մը գործերէն դուրս եկող այն ուժգին արտայայտութիւններն որոց չեն կրնար տանիլ փափուկ խառնուածքներ, իրեն ալ հաճոյ չեն: Վկայ են այս մասին հետեւեալ խօսքերը զոր իր մէկ տաղերգութեանը մէջ կը դնէ իբրեւ յայտարար իր հոգիին ըղձանքներուն.

Կը խնդրեմ որ ինձ քերթուած մը կարդաս, Բերթուած մը խիստ պարզ ու սրբաաղդեցիկ, Որ ամոքէ բուռն յուզմունքներս իմ այս, Եւ օրուան հոգոց փարատէ մըրբիկ:

Ո՛չ թէ այն հրսկայ հին վարպետներէն, Ոչ երգիչներէն վըսեմ գերազանց, Ոյց հեռի քայլերն արդ կ'արձագանգեն Նըրբանցքին մէջէն հին ժամանակաց:

Ձի, ռազմական գոռ երգերու նըման, Հըզօր խօսքն անոնց՝ կը հանեն ի վեր կեանքի խիստ կըռիւն ու յոյզն անվախճան— Իսկ ես հանգիստի տենչամ այս գիշեր:

Խոնարհ երգերու ցանկամ արդարեւ, Հեզիկ սրբաաբուխ երգոց մեղմական, Ձերդ յօղէ ամբան ամպերէն անձրեւ կամ արցունք՝ որ թաց կոպերէ կ'իջնան:

Այսպէս, իր էութեան անծանօթ են անսահմանելի լիկանքները զրգուռած ջիղերու, առանց պատճառի համակրութիւններ, խոր-

շուտներ՝ առանց շարժառիթի, յանկարծա-
շարժ խօսական ընդոստոններ, եւ ուժգին
անկուսներ, վերջապէս բոլոր այն չգիտեմ
ինչերն որք յատուկ են արտաքոյ կարգի հո-
գիններու: Գեղեցկին իշխանութիւնն իրեն
համար կը պարփակուի մի միայն բարեին
պայծառ ուրտներուն մէջ: Զուգեր, կամ
գուցէ անկարող իսկ է, այցելել անդունդ-
ները մարդկային էութեան, ուր կը կարծէ
թէ չարը կը բնակի, վասնզի միշտ իր գեղեց-
կագիտական ըմբռնումներէն դուրս կ'իյնայ
չարը, որուն սատանայոտ ժպիտին մէջ այլք կը
տեսնեն տարբեր գեղեցկութիւններ: Տար-
տարոսին տեսիլը պակուցիչ աղքատութեամբ
մը հեռի կը պահէ զինք ստորայնոց վրայ
խոկալէ, այնպէս որ գեղեցիկը ու երկ-
նաթռիչն իր քերթողական պատկերներուն
մէջ ամենեւին ընդհարման մէջ չեն գտնուիր,
ոչ իսկ կուսնեան թեթեւ հանդիպում մը:
Եւ խառնուածքի ու ճաշակի այս միակող-
մանիութիւնն երբեմն կը վնասէ իր քերթու-
ածներուն, բեռնաւորելով տեղ տեղ իր տո-
ղերը բարոյախօսական տափակ առածներով
և հասարակ—տեղիքներով:

Բաց ի այս պարագաներէն, իր մուսան,
յանդուգն բանաստեղծներու պատահածին
նման, երբեք ամբաստանուած չէ: Իր ներքին
կեանքի մասին ալ ստգտանելի չափազան-
ցութիւններ չեն պատմուիր: Կեակաբանական
մակդիրը գոր նախորդ յօդուածի մը մէջ
գործածած էինք անգլիախօս քերթողներու
մեծ մասին համար, Լոնկֆելլոյի համար եւս
կրկնել հակառակ չէ ճշմարտութեան: Միայն
թէ իր հեզիկ ու բարոյալից խօսուածքները
նուրը նուաղ աղբուսներ են, որք չեն կրնար
բաղդատուիլ, օրինակի համար, Լամարդինի
մը գործովալից երկնահարալ նուագներուն, և
ոչ իսկ հեռուէն կրնան հետեւիլ Պօսիւէի մը
մարգարէալայել վսեմութեանց: Հաստատուն
գետնի վրայ քալող այս բանաստեղծն ամե-
րիկացիի դրականութիւնն ունի, խոհմու-
թիւնը՝ որ չի թոյլատրեր իրեն խիստ բարձ-
րերը սաւառնիլ. և որչափ ալ բարձրերը վե-
րացած ըլլայ ինք, միշտ կը յիշէ հողագուն-
տիս մակերեւոյթը, և կամ գիտակցութիւնն

ունի թէ արծուաթեւեր կը պակսին իրեն:
Այս պատուական անձը, եթէ բանաստեղծի
կոչում չունենար, անշուշտ պիտի ըլլար քաղց-
րաբան բարոյախօս մը, միսիոնարի մը ցուրտ
առաքինասիրութեամբ թրմուած: Իր գե-
րադաս բանաստեղծի համաշխարհական համ-
բաւն ամենագրաւ հանճարի մ'արդիւնք ըլ-
լալէ աւելի՝ արգասիք է զարմանալի ժո-
ղովրդականութեան մը, թէ՛ Հին և թէ՛
Նոր աշխարհներու մէջ: Կարծես թէ բունի
ծանօթ ըրած է զինք երկու կիսագունդներուն
ալ, անձ և անուն միասին ցուցնելով անոնց:
Ուրիշ պատճառ մ'ալ իր համակրելիու-
թեան ա'յն է, որ, իր կիրքերը, ու-
րախ ըլլան թէ տխուր, հասարակածին ժո-
ղովրդեան կիրքերն են, սովորականները,
որք խիստ դիւրաւ կը բացատրուին, և ամէն
կողմերէ ալ դիւրաւ կ'զգացուին: Այս պատ-
ճառաւ, երբ առիթը կը ներկայանայ իր հան-
ճարին արժէքը գնահատելու, քատողներու
բազմութեան մէջ չեն ծագիր կարծիքնե-
րու այն անհաշտելի հատուածութիւններն
որք ընդհանրապէս երեւան կուգան մե-
ծամասնութեան կարծիքներն արհամարհող
և իրենց հանճարի թափին ու կամեցողու-
թեան միայն անսացող հեղինակներու շուրջ:

Գործվանքի զգացումն իր սրտին մտե-
րիմն է: Բարի ծերունիի մը, որ մանկութեան
վրայ կը գուրգուրայ, բոլոր սրտազեղում-
ներն ունի, երբ կը մտածէ անոնց ապագայ
կեանքին պայքարներուն վրայ: Ինք չատոնց
վերջացուցած է իր գործօն դերը մարդկային
ընկերութեան մէջ, և վհատութեան ու ճանձ-
րոյթի պէս բան մը կ'զգայ երբ աչքին առջև
կը ներկայանան իր անցեալ ասպարէզին բա-
զում հանգրուանները, որոնցմէ պիտի անց-
նին տակաւին մատաղ հոգիներ: Դառնահոգի
մարդը չէ ինք որ տրամադիր ըլլայ հայհոյե-
լու ճակատագրին դէմ, այլ գիտակից սիրտ
մը որ փորձառութեամբ կ'զգայ թէ ինչ երե-
կոյնք կսպասեն կեանքի առաւօտին: Տըրտ-
մախառն խանդաղատանքի մրմունջ մը դուրս
կուգայ իր չրթունքներէն, երբ կը գուգորդէ
իր երեւակայութեան մէջ ստուերական տե-
սիլը կենաց վերջալքին, և արեւածայրը նոր

նոր կեանքերու: Եւ իր էութիւնը, որ այլեւս ընկրկող հորիզոնի մը երեւոյթն ունի, անշուշտ դառնութեամբ պիտի մեկնէր աշխարհէ, եթէ չի ծագեր իր վրայ կենսաւէտ մանկութեան մը մերձակայ լոյսը: — Ահա այդ զգացումներն յայտնող նմոյշ մը իր երգերէն, մանկութեան ուղղուած:

Ո՛վ մատաղ ոտքեր, որք ամեր երկար Սին տարտամութեանց մէջ պիտի յածիք, Որ պիտի տըրտմիք, մաշիք վըշտահար, Չարակրութեան տակ ձեր բեռին դըժնիկ. Ահա ես տակաւ կուգամ կը մօտիմ իջեւանին որ կանգնի ճամբուս վրայ, — Ուր կը դադարին տաժանք ոխերիմ, — Երբ ճանապարհին վըրայ կը խորհիմ՝ Կըշտակիր հոգին իմ կը ձանձրանայ:

Ո՛վ մատաղ ձեռքեր, որք ամեր երկար Պիտի երջանիկ ըլլաք, և կամ հէք, Որ պիտի հայցէք՝ թըշուառ և տըկար՝ Շընորհն ուրիշին, կամ պիտի շնորհէք, Ես որ մարդկութեան համար մըտերիմ. Ջանացի գիրքով գըրջով անխընայ՝ Երբ ձեր տաժանքին վըրայ կը խորհիմ, Կըշտակիր հոգին իմ կը ձանձրանայ:

Ո՛վ մատաղ սիրտեր, որ անդուսպ անժոյժ Այդչափ ջերմագին տրոփէք եռանդով, Որ այդչափ հըզօր և այդչափ աշխոյժ կը սիրավառիք անկեղծ, անվըրդով, Ո՛հ, իմ խռովեալ սիրտս՝ որ՝ երկար ամեր ճառագայթարձակ լոյս կը ծաւալէր, Կիրքերու բոցով արդ՝ աճիւնացած՝ կը պարածածկի ցուրտ և մոխրամած:

Մատաղ հոգիներ, թափանցիկ վըճիտ Սպիտականընոյ բիւրեղի նըման, Կամ արփուոյն չողից պէս երկնաժպիտ՝ Զոր մեզ կը հոսէ աղբիւրն աստուածեան, Ամաց մըռայլին մէջէն բեկբեկուն՝ Լոյսերն արեւուս ինչպէս կը չիկնին. Իր մայրամուտի հուսկ յետին պահուն, Ինչպէս կը մըթնի հոգիս տըտմագին:

Այս բախտաւոր բանաստեղծը, որուն նմանը գտնել դժուար է, սիրելին եղած է միշտ ժողովուրդին, թէպէտ ժողովուրդը ըսելով չենք հասկնար խառնախորթ ամբոխը, եւ ոչ ալ ժողովրդականութիւնը կուզենք մեկնել իբրեւ շահագործում ուսմկին տկարութեանց: Ընդհակառակը, գաղտնիքն ունի նա գոհացնելու ամէնէն նուրբ ճաշակներն անգամ: Արուեստագէտն որ իր մէջ կ'ապրի, իր վայելուչ ու շնորհալի տարազով, գիտէ սիրելի ըլլալ ազնուական դասերու: Hiawatha լեզբութեամբ մէջ թէեւ կը ներկայանայ իբրեւ երգիչ Ամերիկայի բնիկ ցեղերուն, որք խոնարհագոյն գրոհներն են Միացեալ Նահանգաց ընդհակութեան, բայց իր յօժարութիւնք ամենեւին ուսմկասիրական չեն, եւ նոյն իսկ յիշեալ ժողովրդային լեզբութեամբ մէջ նա ցուցադրած է ձեռնոցաւոր բանաստեղծի մը բոլոր արդէն ու զարդը:

Եթէ չունենար Hiawatha ընդարձակ լեզբութեամբ, եւ մասամբ ալ Evangeline-ը որք տեղական աւանդավէպերու եւ դէպքերու յիշատակիչ ու երեւեցուցիչ գործեր են, մասնաւոր առաջինը, Լոնկֆելլօ զուրկ պիտի ըլլար ամերիկեան բանաստեղծի բնական պայմաններէն: Այդքէնածին բանաստեղծի մը ներելի պիտի չըլլար այն դօրաւոր պատուաստը գոր Լոնկֆելլօ ընդունեց Եւրոպայէ: Ամերիկեան բնիկի, անգլիաբուն գաղթածինի, եւրոպականացեալ ամերիկացիի երբեակ դէմքերուն վերքերից կեդրոնական տիպար մը, բազադրեալ անձնաւորութիւն մ'է: Իր հռչակումն իբրեւ ամերիկեան բանաստեղծ՝ հետեւանքն է ծննդավայրի անվիճելի իրաւունքին: Ապա թէ ոչ, աշխարհաքաղաքացի լեզբով մը պիտի նկատուէր, եւ տիեզերական համբաւներու բաղմութեան մէջ գուցէ խառնուէր ու պզտիկնար իր համբաւը: Ինչ բազաւորութիւն եղած չէ իրեն համար ամերիկեան կլիմային ամուրթիւնն ի մասին բանաստեղծական հանճարներու: Եթէ քաջ մրցակիցներ կանգնէին իր դէմ իր բնավայրին մէջ, հետեւանքն իրեն համար նուազ նպաստաւոր պիտի ըլլար: Իր կաղնիի դիտակը անո՛ր համար մանաւանդ

պատկառելի է, որովհետեւ գլուխ կ'ամբառնայ նուազ բարձրաբուն հասակներու մէջէն: Նոր աշխարհը քանի՞ հատ քերթողական բարձունքներ (sommités) կրնայ ճակատեցնել Հին աշխարհի դէմ:

Բովանդակ անդլիախօս աշխարհի մէջ չենք կրնար գտնել բանաստեղծ մը, թերեւս թէնիսիսընէ զատ, որ կարող ըլլայ համբաւի ընդարձակութեան մասին մրցիլ Լոնկֆելլոյի հետ: Ամէնէն շատ կարդացուած բանաստեղծն է, ամէնէն աւելի ակնորժականն է, վասն զի ամէնէն աւելի լաւ գիտցողն է թէ ընթերցողն ինչ կուզէ: Բայց կարեւոր խնդիր է թէ ժամանակակից սերունդին սիրելի հեղինակ մը ո՞ր աստիճան ապահոված կ'ըլլայ իր յաջողութեան տեւականութիւնը նաեւ հեռաւոր յաւիտեաններու մէջ, կամ անմիջական համբաւը ժամանակէն հասկնող հեղինակին՝ բաւական ամուր երայխաւորութիւն է նաեւ մշտնջենական համբաւի: Ներկային փառքը միշտ ապագային փառքն եղած չէ գրականութեան մէջ, ո՛չ ալ ներկային դատապարտութիւնը՝ ապագային դատապարտութիւնը: Հեղինակներէ շատեր որք իրենց ժամանակի մաշդն եղած են, աւելի ազդուած են իրենց ժամանակէն, քան թէ աղբաւ անոր վրայ: Տիրականութեան դրոշմը, որ անհրաժեշտ պայմանն է մեծ մարդուն, պակսած է իրենց: Հիներէն վիրագիլիոս միայն բարեբախտ եղած է կենդանութեան ժամանակ. եւ այսօրոյս դրամական տեսակէտով: Բարոյական դժբախտութիւնք շատ իսկ տառապեցուցած էին զինք իր միջավայրին նախանձոտութեան պատճառաւ. եւ եթէ վրայ չհասնէին Հոովմայեցի ինքնակալին առ նա շնորհած 28000 լիրաները, չարաչար նեղութեանց մէջ պիտի մեռնէր անշուշտ: Աւանդութիւնը կը ներկայացնէ զՀոմեր իբրեւ մուրացիկ մը՝ կուրացեալ եւ թափառական. Շէյքսպիր՝ պատշաճաւոր զնահատութեան մը չէր արժանացած իր ժամանակին. Որլըն խեղճութեամբ վերջացուցած էր կեանքը. Տանդէ թշնամանուած էր իր ժամանակակիցներէն: Յաջորդական դարուց դատաստանը, որ ամէնէն անխարդախն է, հե-

տըղհեալ էր եւան հանց իսկական արժանիքն այս զրկեալ հանճարներուն: Լոնկֆելլօ իր կենդանութեան միջոցին ա՛յնչափ բախտաւոր ըլլալովն հանդերձ, պիտի ունենա՞յ բաւական ոյժ՝ յարաձգելու համար իր անմիջական յաջողութիւնները մինչեւ հանդերձեալ դարեր: Ոչ մէկուն ներելի է գուշակօրէն խօսիլ այս մասին, թէ եւ քիչ չեն անոնք որ կը տարակուսին Լոնկֆելլոյի արժէքին անանցականութեան վրայ:

Սոյն բանաստեղծին ընդարձակ հմտութեանց վրայ գաղափար մը ստանալու համար, հարկ է անպատճառ աչքէ անցրնել անոր գարծերը: Մտքի ամբողջական մշակութիւն մը՝ ստացական տեղեկութեանց ամէն ճիւղերու մէջ, մասնանի կրնէ զինք ուրիշ շատ մը քերթողներու կարգին մէջ, որք յաճախ յետեւալ կամ կաղ կ'ըլլան իրենց սամաններէն՝ դուրս: Թէպէտ համառօտ քերթուածներ հանդիսարան չեն կրնար ըլլալ արտաքին հմտութեանց զոր կրնայ ունենալ քերթողը, բայց օրինակի համար, Sand of the desert in an hour-glass ոտանաւորը բաւական է ցուցնելու հեղինակին պատմական տեղեկութիւնները՝ զոր ափսափոյ պարզած է հոն: Առ այժմ չենք կրնար ամբողջութեամբ թարգմանել զայն և դնել հոս: Թարգմանչութեան ճիւղին մէջ ալ ունեցած է անօրինակ յաջողութիւն: Վկայ Տանդէի թարգմանութիւնը. որուն կցած է խիստ յարգի մեկնաբանութիւններ, որք անձնական հետազօտութեանց արգասիք են: Կարող քննիչներ անըստգիւտ դատած են իր թարգմանութիւնները: Ունի ուրիշ թարգմանածոյ մանր քերթուածներ ալ, որք իր քաջ լեզուազիտութեան ապացոյցներ են: Իր գրչին տակ բոլորովին ամերիկայնացած են սպաներէնէ, իտալերէնէ, գաղղիերէնէ, գերմաներէնէ անգլիերէնի վերածուած բազմաթիւ բանաստեղծական կտորներ: Ուղղուի ծանօթ գաղղիերէն բանաստեղծական կտորը «Հրեշտակն և մանկիկ» իր թարգմանութեանց շարքին մէջ կ'երեւի, առանց բնաւ թարգմանածոյ տառաւորի մը հետքը կ'ընկուէ:

Աննաման կտորներ են դարձեալ՝ «Սբրինկ-
ֆիլտի զինանոցը», «Փարոս»ը, «Համակերպու-
թիւն»ը, «Ծովուն գաղտնիք»ը, «Հին Ժա-
մացոյցը սանդուղին վրայ», «Նիւ-Ռորդի
հրէական գերեզմանատուն»ը, «Հովը ծխանին
վրայ», «Պրոմէթէոս»ը, և այլն: Խիստ չոր
նիւթերու վրայ, որոց մասին մարդ գրեթէ
չի կրնար դանել ըսելիք բան մը, կարող է
գրել, առատօրէն և գեղեցկօրէն:

Այս համառօտ տեղեկութիւններէ յետոյ
գեռ խնդիր է գիտնալ թէ ի՞նչ և ո՞րչափ
ինչ կրնայ չահիլ հայ գրականութիւնը Լոնկ-
ֆելլոյի գործերէն: Իրաւ է թէ մեծ մասն
անոր գործերէն անհասկնալի պիտի ըլլան
մերիններուն, իբրեւ գրութեանք որք ամե-
րիկացի անհատը միայն շահագրգռելու բնու-
թիւնն ունին: Բայց քիչ չեն նաև իր գեղե-
ցիկ բանաստեղծութիւններն որք տարբեր
չնորհներ կրնան աւելցնել մեր գրականութեան
մէջ՝ քան մեր կարգ մը բանաստեղծներուն այն
քերթուածիկները որք դունատ ազդուն
pasticheներն են գաղղիական նոր բանաս-
տեղծութեան: Մերիններուն անբնականու-
թեանց դէմ իբրև չափաւորիչ տարր, և իբրև
դարմանիչ անոնց ընդհանուր կթոտութեանն
և արուեստական հալումալին, անգլեւսաք-
սոն բանաստեղծութեան ներկայացուցիչը
կրնան բարերար դեր մ'ունենալ: Եթէ
անոնց ներկայութիւնը հաղիւ երբեք տես-
նուած է մեր մէջ, յանցանքն այն գրագէտ-
ներուն է, որք անգլիկերէնի հմուտ ըլլալով
հանդերձ՝ ձեռնպահ կը մնան զանոնք հա-
յացնելէ: Միայն կը յիշենք Վենետիկ հրա-
տարակուած գրաբար խիստ նիհար հաւաքա-
ծոյ մը ամերիկեան բանաստեղծութեանց,
«Բնար ամերիկեան» անուամբ: Երանի՜ թէ
կարգ մը գաղղիական այլանդակ և աննշան
վիպագրութեանց մեր մէջ յառաջ բերած
սրարբեցութիւնը (enivrement) տեղի տար
ուրիշ ազդումներու, և թարգմանիչներու
աչքերն ուղղուէին քիչ մ'ալ ուրիշ կողմեր:

ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՆՕԹԵՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ՆՕԹԵՐ

Հիւանդանոցի երրորդ թեւին երեք
յարկաբաժիններէն կամ տաղաւարներէն մէ-
կուն շինութեան ձեռնարկուիլը, Յովհաննէս
և Մարգէն Յակոբեան Տեարց նուիրատու-
ութեամբ, վերջին շարժումն կարեւոր իրո-
ղութիւններէն մէկը եղաւ՝ մեր բարեգոր-
ծական շրջանակին մէջ: Յուսալի է որ միւս
երկու մասերուն շինութեան ալ ձեռնարկուի
ի մօտոյ, թէև վերջնապէս յայտնի չէ տա-
կաւին թէ որո՞նք պիտի ըլլան անոնց բո-
ւանդակ ծախքը հոգացողները: Ամէն պա-
րագայի մէջ, այդ շինութիւններն ալ ապա-
հովուած են բարերարներու շնորհիւ, ինչպէս
հիմնարկէքի արարողութիւնը կատարուեցաւ
արդէն Ս. Համբարձման տօնին օրը: Յ. և
Մ. Յակոբեան Տեարք՝ իրենց ստանձնած
բաժինին կառուցումը յանձնած՝ են ճարտա-
րապետ Լեւոն էֆ. Կիւրեղեանի, որ ո՛չ մի-
այն իր արուեստին մէջ ունեցած գործնական
հմտութեան կը միացնէ գեղարուեստական
ճաշակ, այլև հիւանդանոցներու և դարմա-
նատուններու կառուցման առողջապահիկ
պայմաններուն և նորագոյն գրութեանց մա-
սին ուսումնասիրութիւններ կատարած է ո-
րոնց վրայ քանի մը տարի առաջ ձեռնհասօ-
րէն գրեց Մասիսի մէջ:

Օրուան Նօթերու կարգին մէջ ի դէպ է
յիշել որ, Ս. Փրկչեան Հաստատութիւնը
միայն երրորդ թեւին շինութեամբը չէ՝ որ
պիտի օժտուի շատ մօտաւոր ժամանակի մը
մէջ, այլ հոգեկան ու մարմնական պէտքե-
րու յատուկ ուրիշ երկու շինութիւններով
ալ,—մատուռ և դեղարան: Այս վերջինը
պիտի կառուցուի բարեյիշատակ Տոքթ. Խօ-
րասանճեան էֆ. ի ընտանեաց կողմէ նուիր-
ուած 325 ոսկիի գումարով և ճարտարապետն
է Յակոբ էֆ. Ունճեան: Դալով եկեղեցիին,
թէև արդի մատրան տեղին վրայ պիտի բարձ-
րանայ անիկայ, բայց բոլորովին անջատ պիտի
ըլլայ Հիւանդանոցէն, առանձին շրջափակով
և փողոցին վրայ բացուող դուռով մը: Իսկ

ներքին դուռ մըն ալ պիտի ունենայ՝ պատրաստարեալներուն համար միայն։ Այս կերպով, նորակառոյց եկեղեցին Հիւանդանոցին մաս կազմելով հանդերձ, ուխտատեղի՝ մը պիտի ըլլայ, իր ուխտագնացութեան յատուկ օրը ունենալով։ Եկեղեցիին շինութեան ծախքն ալ ստանձնած են Թահթապուրունեան եղբարք։

Ս. Պատրիարք Հայրը, որ չորեքշաբթի օրուն խառն ժողովի նիստէն յետոյ Ազգ. Հիւանդանոց այցելեց, մասնաւորապէս զբաղեցաւ այս շինութեանց գործերով և Տնօրէնութեան ու ճարտարապետներուն հետ կարգադրութիւններ ըրաւ։ Հին մատուռը պիտի փլցուի յառաջիկայ երկուշաբթիէն իսկ, նոր եկեղեցիին կառուցման ձեռնարկուելու համար։

Վերջին ՊԱՀՈՒՆ, Մասիսը մամուլին յանձնուած վայրկեանին, բերկրութեամբ կը կարդանք Բիւզանդիոցի մէջ թէ, Օգոստ. 3 թուականով Թիֆլիզէն, Ս. Հայրապետին կողմէ Ս. Պատրիարք Հօր հասած հեռագիր մը կ'աւետէ՝ Ռուսահայոց դպրոցական և եկեղեցապատկան—կալուածոց խնդիրներուն նպաստաւոր լուծումը։ Ն. Ս. Օծութիւնը կը ծանուցանէ արդարեւ, թէ կայսերական Ուքադ մը ելած է որուն համեմատ՝ դրաւուած դպրոցներն ու կալուածները Հայ եկեղեցւոյն կը վերադարձուին, մատակարարուելու համար նոյն դրութեամբ և օրէնքով որ կար հոգելոյս Տ. Գէորգ Կաթողիկոսի օրով։

ՄԱՀՈՐԱՆ ԷԵՇՏԱՆՔ

Ձը վայելուած շնորհներուդ կանացի,

Անուրջներուս կողովն էր որ ամէն օր

Առջեւդ եկայ թօթուցի։

Բիւրերփնեան, թարմ պաշտամունք մը ցօղամած

Տեսիլքներուս մէջ փայտայած անսովոր

Մոգուհիին ուղղուած։

Վարանումներ, տարակոյսներ յամրաբար

Էութիւնըս հեռզնեալ քանդեցին,

Ձիս տանջելով անդադար։

Կը խորհէի որ դուն արդեօք Տեսիլքիս

Ինծի գծած պատկերն էիր քմածին,

Աւալոնեա'ն դիցուհիս։

Դէպի քեզի մագըլցելու ճիգերս ալ,

Շատ կանուխէն տուայտողի՜ ցնորքով,

Չարչարեցին զիս դարձեալ։

Բայց հըրեղէն հեշտութիւններ ուրուային,

Բոցէ տենդեր կ'երազէի անձիդ քով,

Մի'չտ ինքնիրենս, առանձին։

Ազուր տեղ մը, պատի վրայ կամ այլուր,

Գնդասեղով փակցըւած նուրբ, օղակայ,

Թիթեռնիկին պէս մաքուր,

Սրտիդ կառչած կը մնայ սէրս՝ անայլայլ,

Շարժում չունի. հեղձուած է անիկայ։

Մահուան հեշտանքն է աս ալ։

Մ. Ս. ՊԱՐՍԱՍԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Դրասէր ընթերցող մը, որ բացառիկ կերպով սուր յիշողութիւն մը ունենալ կ'երեւայ, նամակ մը ուղղելով ինծի, յայտնութիւնը կ'ընէ բանագողութեան մը, առաջարկելով միեւնոյն ժամանակ որ, պէտք եղածը դրեմ այդ մասին:

Վստահօրէն, լրագրական թո՛ւ ու բո՛հին մէջ, թերեւս ուշադրութիւնէս վրիպէր այդ բանագողութիւնը, առանց յուշարարութեանը նամակագիրիս, և թերեւս աւելորդ իսկ ըլլար զբաղիլ անով, եթէ մասնաւոր պնդում մը չըլլար այդ մասին, և մանաւանդ եթէ այս միջադէպին մէջ, չգտնուէր պարագայ մը՝ որուն պէտք է ուշադրութիւն դարձնել, որովհետեւ ան կը յատկանշէ գրական յորի երեւոյթ մը, որով վարակուած ըլլալ կը թուին շատեր, և որ մշակուելով կրնայ գրական տգեղ բարք մը ստեղծել:

Իրաւ է թէ, գոնէ ինծի չէր իյնար այս մատնանշումը, — որովհետեւ բանագողութիւնը ինձմէ է կատարուած, — սակայն քանի որ ուրիշ մըն է որ առիթ կուտայ անոր, ես պահ մը մոռնալով բոլորովին՝ գործին անձնական հանգամանքը, և մեկնելով ընդհանուր տեսակէտէ մը, պիտի ջանամ վեր հանել այն ոգին՝ որ մղած է ենթական այդ ձախորդ քայլին, բան մը՝ որով վարակուած ըլլալ կ'երեւան նորահաս գրիչներէ շատեր, վերջին ժամանակներս: Տարակոյս չկայ թէ այդ ընթացքը օգտակար չկրնար ըլլալ անոնց՝ որոնք քիչ շատ վտանգին տակ կը գտնուին անոր մէջ գահավիժելու, և առո՛ր համար իսկ է

որ, պէտք է նկատողութենէ չվրիպեցնել այս պարագան, մասնաւոր այս միջադէպին առիթով, զգուշացնելով բոլոր անոնք՝ որոնք ենթակայ կը գտնուին այդ փորձութեան, և որոնք չեն մտատանջուիր այդ տեսակ արարքի մը դերակատար հանդիսանալու:

Ահաւասիկ թէ ի՛նչ կը գրէ աշաւուրջ նամակագիրս. —

«... Մտածելով որ թերեւս Ձեր ուշադրութենէն վրիպի, Ձեզ կը շնորհակալ յօգուածի կտրօն մը, ուր պիտի գտնէք բանագողաբար վերակրկնութիւնը այն յօգուածին՝ զոր գրած էիք ատենով: Բաղդատելով պիտի տեսնէք թէ, ոչ միայն գաղափարի և շարադասութեան եղանակով նոյնն է ան Ձեր յօգուածին, այլ նաև այդ բանագողութեան մէջ տողեր կան՝ որոնք ուղղակի փոխ առնուած են Ձեր գրութենէն: Կը զարմանամ թէ մարդ որչափ յանդուգն կրնայ ըլլալ, այսչափ վրան բաց ձախողանքէ մը չքաշուելու համար: Ձեր ուշադրութեան յանձնելով զայն, կը ներփակեմ երկու յօդուածները, սպասելով որ այդ Պարոն Պոզմանին պէտք եղած դասը տաք, և այլն»:

Կ. Պոլիս

ՄԱՊԻՈՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Եւ ահաւասիկ երկու յօդուածներուն այն հատուածները՝ որոնք գրեթէ սող առ սող՝ բառով մը չեն տարբերիր իրարմէ: Մէջ բերելէ առաջ զանոնք, երկու բառով ըսեմ թէ այդ Պոն. Պոզմանը իր գրուածքը բանագողած է ԴՈՒՐԵԱՅՈՒՆԻՔԻՆ խորագիրով մէկ յօդուածէս՝ զոր երեք տարի մը առաջ հրատարակած էի օրաթերթ Մադիկի մէջ:

ԴՈՒՐԵԱՅՈՒՆԻՔԻՆ

«... Պետրոս Դուրեան, մեր ամէնէն զմայելի բանաստեղծը, աշխարհաբար բանաստեղծութեան յառաջապահ հիմնադիրը, հետևականերու ամբողջ շարք մը ունի, որոնք սարսափելի կերպով վարակուած են իր սիրակոծ բանաստեղծի հիւանդութեամբ:

«Մեր մէջ, ամէն սողայ որ բանաստեղծութեան կամ գրականութեան պզտիկ հակումներ մը ունի, Դուրեանով կը սկսի գրական

ԴՈՒՐԵԱՅՈՒՆԻ ԱՂՈՅՈՒՆԻՔԻՆ

«Մեր ամէնէն զմայելի բանաստեղծը և աշխարհաբար բանաստեղծութեան յառաջապահ հիմնադիրը՝ Պետրոս Դուրեան՝ ամբողջ շարք մը ունի իր ետև, որոնք սարսափելի կերպով վարակուած են իր սիրական բանաստեղծի հիւանդութեամբ:

«Ներկայիս մէջ ամէն պատանի որ բանաստեղծութեան կամ գրականութեան պզտիկ հակումներ ունի, Դուրեանով կը սկսի գրական

նութեան մէջ իր ճամբորդութիւնը, տարիներով անով կը մնանի, անո՛վ կ'ապրի, ու պէտք է խոստովանիլ որ, այն ազդեցութիւնը զոր կը կրէ Դուրեանամոլութեան իր յափշտակութիւններէն, հոգիի ամէնէն գէշ կազմաւորութիւնը կուտայ իրեն, դարձնելով զինքը հիւանդ, թոքախտաւոր, հիւծած, օրէ օր մեռնելու ենթակայ արարած մը, որ... և այլն:

«Այս տեսակէտով, Դուրեանը, Եղիայէն առաջ ու Եղիայէն ետքը, ամէնէն գէշ ազդեցութիւնը ունեցած է մեր բոլոր տղոց, աղջիկներուն, երիտասարդներուն վրայ: Կը վխտան այսօր, ամէն կողմ, Դուրեանի՝ հիւանդ բանաստեղծի այդ վիճակէն վարակուած, ու անոր մոլեգնօրէն սիրահարուած անհամար տղաք, այդ ազդեցութիւնը իրենց կեանքին յաջողապէս պատշաճեցնելէն զրեթէ հիւծած, մեռելատիպ, հիւանդկախ, որոնց աչքին աշխարհը խոշոր ունայնութիւն մըն է, կեանքը անիմաստ բեռ մը, զոր չարժեք ապրիլ:

«... Բայց մարդ չկրնար ըմբռնել երբեք այն գերազանցապէս ողբալի վիճակը անոնց որոնք այս կեանքը կ'ապրին, դժբաղդ հոգիներ դառնալով իրենց բովանդակ կեանքին մէջ: Դուրեանի գործը երբ կանխահասօրէն կը մատուցուի տղոց, գրական յիշատակար տարր մը կը դառնայ: Ասիկա այսպէս դաւանիլը սակայն, ո՛չ մէկ ատեն ստորնացնել է մեր էն զգայուն և ճշմարտապէս հիւանալի բանաստեղծը, Դուրեանը, որ իր ջլատող, հիւանդ ու մեղկացնող երգերովը՝ ամէնէն մեծ պատուհան է ծաղիկ կեանքերու համար, որոնց ամէն բանէ առաջ, խնծիղոտ ու հրճուալից կեանքը պէտք է, ո՛չ թէ մահուան գաղափարին չուրջը, ուրուային դեղերով մը, որ մոլորութիւն ճամբան է կեանքին մէջ»:

ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆ

Ինչպէս կը տեսնուի, ընդօրինակութիւն մը աւելի կատարեալ չկրնար ըլլալ: Այս կեղծարարութեան մէջ, պարոնը միակ ձեռնհասութիւն մը և հեղինակութիւն մը կրցեր է ցոյց տալ. — զանց առնել յողուածին առաջաբանը, անոր կէս տեղէն սկսեալ ընդ-

կանութեան մէջ իր ճամբորդութիւնը, տարիներով անով կը զբաղի, անով կ'ապրի և անկէ գտած յափշտակութեան ազդեցութիւնը հոգիի ամէնէն գէշ կազմաւորութիւնը կուտայ իրեն, դարձնելով զինքը հիւանդ, հիւծած, օրէ օր մեռնելու ենթակայ արարած մը:

«Այս տեսակէտով Դուրեան ամէնէն գէշ ազդեցութիւնը ունեցած է մեր նորահաս սերնդեան վրայ: Այսօր ամէն կողմ կը տեսնուին հիւանդ բանաստեղծի այդ վիճակէն վարակուած ու անոր մոլեգնօրէն սիրահարուած անհամար պատանիներ, որոնք այդ վիճակը իրենց յաջողապէս պատշաճեցնելէն զրեթէ հիւծած, հիւանդկախ, կեանքը իրենց համար անիմաստ բեռ մը և աշխարհը ունայնութիւն մը կ'երեւայ:

«Մարդ կը սարսռայ ու կը յուզուի, տեսնելով գերազանցապէս ողբալի վիճակը անոնց՝ որոնք այդ կեանքը կ'ապրին, դժբաղդ ու թշուառ հոգիներ դառնալով իրենց բովանդակ կեանքին մէջ:

«Դուրեանի գործը երբ կանխահասօրէն կը մատուցուի տղոց, գրական յիշատակար տարր մը կը հանդիսանայ անշուշտ: Ասիկա այսպէս դաւանիլը սակայն ո՛չ մէկ ժամանակ ստորնացնել է մեր ամենազգայուն ու ճշմարտապէս սքանչելի անմահ բանաստեղծ Դուրեանը: Տղոց ամէն բանէ առաջ, խնդահոտ ու հրճուալից կեանքը պէտք է, ոչ թէ մահուան գաղափարին չուրջը հիւանդոտ դեղերով մը»:

ՅՈՎԷ. Գ. ՊՕՁՄԱՆԱՆ

օրինակել, և զայն ստորագրել՝ առանց երբեք վրդովուելու որ և է մտածումէ:

Ինչպէս կ'ըսէի, գոնէ ինծի չիյնար, և նպատակաւ ալ չէ արդէն հաշուեյարդարութիւն մը ընել այդ պարոն Պօզմանիին հետ, կամ պզտիկ դաս մը տալ: Ո՛չ ալ միտք ունիմ տուգանքի մը ենթարկելու զինքը՝ հեղինակի իրաւունքի մը իւրացմանը համար: Ասոնք չեն որ մղեցին զիս քանի մը խօսք ընելու այս հարցին շուրջը, որովհետեւ, ինչ կ'արժէ վերջապէս, մտաւորական անանկ մը:

արտադրելու անկարողութեան իր ցաւագին ճիգերուն մէջ, գոհացում տալու համար այդ ապարդիւն ջանքին, ուրիշ բանի որոշում չէ կրցեր տալ, բայց եթէ կեղծարարելու ուրիշ մը գրուածքը, սրտի անվրդով հանգըստութեամբ թէ՛ ո՛վ որի որ՝ ուշադրութիւն գրաւէ ան, կամ մէջտեղ ելլէ՝ Բայց, ո՛վ պարոն Պօզմաններ, մինչ դուք ձեր անպատկառ գրադողութեանց փառքին վրայ կը քնանաք, արթուն Սրապիոններ կան՝ որոնք շուտով կը խանգարեն ձեր երջանիկ քունը:

Վերջապէս, դառնալով այս յօդուածին բուն նպատակակէտին, ինչ որ պիտի ուզէի ըսել, սա է թէ, այս եղական բանագողութեան ցուցադրումը՝ մէկ կենդանի ու գերազանցող նմոյն է այն մոլութեան՝ որ ինքզինքը կը զգացնէ բազմաթիւ նորահասներու գրիչին տակ, բան մը՝ որ նկատուածէն աւելի ուշագրաւ է, և որով կ'արժէ որ զրադին մամուլի աշխատաւորները, հակադրելու համար անոր:

Աւերթը ունենալով զբաղելու բազմաթիւ ձեռագիրներով, արձակ թէ տաղաչափուած, նշմարած եմ որ, բան մը որ մասնաւորապէս ուշադրութիւն կը հրաւիրէ իր վրայ, սա է թէ, գրելու փափաքով տոչորուող խիստ շատ հոգիներ, մատնուած են բանագողելու ունակութեան, և յայտնի կը տեսնուի թէ, երբեք չեն խղճահարիւր կամ մտատանջուի՝ այդ տեսակ գրիչներ՝ իրենց գրուածքներուն մէջ սպրդեցնելու տողեր, հատուածներ, ամբողջ պարբերութիւններ՝ զանազան գրողներէ, յաճախ քանի մը գրողներու անջատ հատուածները իրարու քով բերելով, յարմարցնելով, կարկտելով, ու այդպէս նոր գրուածք մը կազմելով, մանաւանդ ոտանաւորի մէջ: Վերյիշումը (reminiscence) չէ՝ իրենցը, որուն պատասխանատուութիւնը աստիճան մը մեղմ է, այլ ուղղակի բանագողութիւնը, որմէ բնաւ չեն երկնչիր, և զոր կը գործադրեն, իբր թէ ամենապարզ բան մը ըլլար իրենց ըրածը: Թերեւս կը մը խիթարին ինքզինքնին սա՝ երջանիկ համոզումով թէ՛ ո՛չ մէկը կրնայ նշմարել այդ

բանը, երեւան ելլելու ո՛չ մէկ հաւանականութիւն կայ, և թէ կրնան իբր իրենցը ծախել ի՛նչ որ իրապէս իրենցը չէ:

Այսպէս, այդ կարգի գրիչներ, երբ իւրացնեն նիւթ մը, որուն վրայ գրել ուզեն, չորս կողմէն կը հաւաքեն անջատ մասեր այն տեսակ յօդուածներէ՝ որոնք մօտաւորապէս կրնան շօշափել իրենց նիւթը, ու քիչ մը մէկէն, քանի մը տող միւսէն, հատուած մը ուրիշէ մը առնելով, քովէ քով բերելով, քիչ մը փոխելով և պզտիկ բան մըն ալ իրենցմէ դնելով, կը կերտեն յօդուած մը, ու կը զրկեն խմբագրութեան մը, որ բնականաբար ստիպուած չլլալով գոց գիտնալու հայերէն հրատարակուած ամէն գրութիւն, ու պարտականութիւն չունենալով մանրակրկիտ կերպով քննելու և պրպտելու յօդուածի մը աղբիւրը կամ վաւերական անվաւեր ըլլալը, կը հրատարակէ: Բայց, ուշադիր ընթերցող մը, կամ մէկը որ լայն ու ընդհանուր ընթերցում մը կատարած է հայ գրական գործերու վրայ, աստիճան մը կրնայ նշմարել այդ տեսակ կեղծարարութիւնները, և իբր կեղծ գոհարներ զանոնք զանազանել իրական դոհարներէ:

Իմ գիտողութիւններս սա իրողութիւնը զգացուցած են թէ, այս մոլութիւնը աւելի տարածուած է ոտանաւորի սեռին մէջ, ուր կարելի է հանդիպիլ ծանօթ բանաստեղծութիւններէ ամբողջական տուններու, որոնք փոխ առնուած ըլլան որ և է մէկու մը կողմէ, մէկ քանի աննշան փոփոխութիւններով: Այդ տեսակ գրիչներու վրայ մասնաւորապէս տիրական աղբեցութիւն մը ունենալ կը թուի արդի մեր լաւագոյն բանաստեղծները, որոնց ներշնչումէն ու գրուածքներուն աղբեցութեանէն չեն կրնար ձերբազերծիլ, և որոնք, իրենց ըրած գրականութեան ոգիին համաձայն, հուժկու հետքեր թողած են այդ միտքերուն վրայ: Այսպէս, մէկը որ այդ տեսակ աղբեցութիւններու տակ կը գոհուի, գրիչի իր շարժումներովը կը դեգերի, կը թափառի չորս կողմ, միշտ վերջապէս դառնալ անձնատուր ըլլալու համար այն աղբեցութեան որով կապուած է: Եւ որովհետեւ

սիրահարած է այն գործին՝ որով իր միտքը կը զբաղի, կ'ուզէ նմանը արտադրել, կը ձգնի, կը ջանայ, ասդին անդին կը դառնայ, և երբ որ և է կերպով չյաջողիր, բանագործութեան մէջ կը գտնէ իր սփոփանքը։ Այս կարգէն ո՛րչափ ոտանաւորներու կարելի է հանդիպիլ, ուր նոր ստորագրութիւն մը միայն կը խաբէ քեզ, ըսելու համար թէ՛ այդ կտորը այնինչինն է։

Այս ազդեցութիւններուն հետեւանքով է նաև որ, վերջերս բանաստեղծական արտադրութիւններու մէջ սխալ հասկցուած սեփացօլիք մը չունչը կը փչէ։ Որովհետև մէկ քանի հոգի այդ ոգիով բանաստեղծութիւններ գրած են, ալ ամէն գրիչը ձեռքը առնող պուէտ՝ կ'ուզէ նման բաներ արտադրել կամ զանոնք կեղծել։ Տեսնաք ինչե՛ր կան այդ ոտանաւորներուն մէջ։ — Ղարշ, ժանեակ, ժապաւէն, թաւիչ, տանդէլ և այլն։ Ուրկէ՞ ելան այս իբեքները։

Ուր պիտի կրնայինք գտնել պատճառը այս հետեւակութեան և բանագործական մոլութեան։ — Ուրիշ ոչինչի, բայց եթէ անկազմակերպ միտքերու կողմէ արտադրելու համար բռնի ի գործ դրուած այն ջանքին մէջ, ուր յղանալու, ստեղծագործելու անկարողութիւնը և մտաւորական մթերքի սնանկութիւնը՝ ենթական կը մղէ գրագործութեան։ Գողութեան որ և է տեսակը՝ դատապարտելի բան մըն է միշտ։ Գրագործութիւնն ալ չդադրիր իյնալէ այդ դատապարտութեան սահմանին մէջ, աստիճան մը աւելի մեծ պատասխանատուութեամբ։

Ի՞նչ կ'արժէ ուրիշին փետուրներովը զարդարուելու այն անախտ հաճոյքը, զոր ինքզինքնուն կը ներեն դրելու փափաքը ունեցողներէ ոմանք, հաճոյք՝ որուն հիմը խախտու է միշտ, և օր մը կրնայ փլիլ իր սիւներուն վրայ՝ ամօթապարտութեան հետք մը միայն ձգելով անոր փառքովը սոնքացողին։ Արժանիք՝ իր ուժին ու կարողութեան ցուցադրութեանը մէջ պէտքէ գտնել, ո՛րչափ ալ համեստ ըլլայ անոր աստիճանը։ Պատուաբեր բան մը չէ կեղծարարական այն ճարտարութիւնը՝ զոր քիչ կամ չատ լա-

ջողութեամբ կը գործադրեն նորահասներէ ոմանք։ Այդ արուեստը՝ որ և է ուրիշէ աւելի բարձր աստիճանով մը պատուաբեր չէ անոնց որ Մտաւորական Գործին աշխատաւորները ըլլալու եռանդը ունին։

Ուրիշին գործովը կեղծարարաբար փառաւորուելու այդ անպատկառութիւնը՝ նողկալի բարք մըն է, որ ծիլ արձակած ըլլալով անգամ մը՝ կրնայ մշակուիլ ու տարածում գտնել, ինչ որ փափաքելի չկրնար ըլլալ որ և է կերպով։ Կ'արժէ որ գրականութեան պատրաստուող նոր սերունդին անդամներէն իրենց գործին նշանակութիւնը կշռադատել չկրցող այն գրիչները՝ որոնք հակամիտութիւններ ունին այդ մոլորանքին մասնուելու, զգուշանան անկէ, և յաղթահարեն պզտիկ փորձութիւններու՝ իրենց իսկ անունին համար։

ՅԵՈՎ. ՔԱՐՄԵՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ի՞նչ կ'անցնի կը դառնայ բնախօսական առօրինակ մեք։

Անթուրութիւն։ Ահաւասիկ անլուծելի մընացած խնդիր մըն ալ բժշկականութեան մէջ։ Իրա՛ւ, թէպէտեւ անիկա բարատոքսալ պէտք մըն է, ինչպէս կ'ըսէ միշտ Ռիչէ իր Բժշկական Ասուլիսներուն մէջ, և սակայն աւելցնենք որ, անսուաղութիւնը չէ անիկա և ոչ ալ անսուաղութեան ճշգրիտ, ստոյգ արտայայտութիւնը։ Իր նկարագիրը ջղային է, երեւակայական է, ցնդական է։ Նախ հասկնանք թէ մարդ ուրկէ՞ կըզգայ անթուրութիւնը։ Հարցուցէք ձեր ծանօթներուն, ձեր ազգականներուն ու բարեկամներուն։ Ոմանք վիզը ցոյց կուտան, ուրիշներ՝ փորը, այնինչ՝ կուրծքը, այնինչ՝ լեզուն, և չատեր ալ՝ ոչինչ։ Անտարակոյս, անթուրութիւնը կը զգացուի ստամոքսին մէջ առաջ եկած տարտամ զգայութեամբ մը որ կ'անհետանայ, երբ ուտելիք կը հայթայթուի։ Այդ զգայու-

թիւնը երեւան կը բերէ կծկումներ, ճշմարիտ սուր ցաւեր ամբողջ իրանին մէջ :

Ուրիշ հետաքրքրաշարժ երեւոյթ մըն է անօթութեան պարբերական հանգամանքը : Ամէն ոք կրնայ հաստատել այս պարագան : Ճաշի ժամը հասած է, անօթի էք : Բայց ըստ որում, պարագաները այնպէս կը բերեն որ չէք կրնար սեղան նստիլ, ու ճաշը կ'ուշանայ երկու երեք ժամ, անօթութիւնը կ'անհետի : Պ. Անթոնիօ, որ Ֆրանսայի առաջին Հանրապետութեան օրով փաստաբան ու միանգամայն դատաւոր էր, ուսումնասիրութիւններ կատարած է անասուններու վերայ, որոնք քանի մը օր անօթի ձգուելով հանդերձ՝ հազիւ փափաք կը զգային մօտենալու իրենց տրուած ուտելիքներուն :

Անցեալ դարուն, Եւրոպայի մէկ քաղաքին մէջ, մարդ մը անձնասպանութիւն փորձեց անօթութեան միջոցաւ : Իր յամր հոգեւարքի միջոցին, այսպէս ըսենք, այդ անձը նօթեր կ'առնէր իր վիճակին, իր ունեցած զգայութեանց վրայ, նօթեր որոնք չեն կորսուած այսօր և շատ մը բանախօսական գիրքերու մէջ, մանաւանդ Բարիդի Բժշկական Համալսարանի բնախօսութեան ուսուցիչ Շարլ Ռիչէի նորաւանդ բնախօսական ստուար բառագիրքին մէջ յարմար տեղեր զետեղուած են : Վեց օրուան առաջին ծովապահութենէ մը վերջ, յիշեալը դեկտ. Յին սկաւ երկրորդ ծովապահութիւն մը, որ մինչև մահը տեւեց : Դեկտ. 2ին խորթակով ճաշած էր, ինչպէս կ'ըսէ ինքը և դեկտ. 3էն սկսեալ, այլևս փշրանք չի դրաւ բերանը :

Ահաւասիկ իր նօթերէն մէկ քանին. —

«Դեկտ. Յին բնաւ անունդ չեմ առներ, բայց բնա՛ւ չեմ տառապիր այդ զրկումէն : Դեկտ. 5ին ո և իցէ անհանգստութիւն չեմ զգար. ստամոքսս, աղիքներս, ցէքումս, էսթրոմանումս կատարեալ հանգիստի մէջ են : Գլուխս հանդարտ է, երեւակայութիւնս՝ գործօն ու եռանդուն, տեսողութիւնս ու ըսողութիւնս բոլորովին յստակ ու մաքուր : Բնաւին փափաք չեմ զգար խմելու և ուտելու : Սակայն ամսոյն 6ին, 7ին և 8ին զգալի կ'ըլլայ ծարաւը, բերանս, մանաւանդ չեմ

զուս և կոկորդս կը չորնան : Ամսոյն 7ին արթնցած պահուս, հրատուօր ծարաւ մը կը զգամ : Ժամը 9ին կը նուաղի ծարաւը. ժամը երկուքին կը սաստկանայ : Բայց ստամոքսս ու աղիքներս լաւ վիճակի մէջ են, տեսողութիւնս պայծառ է, ականջներս լաւ կը լսեն, ահռելի ծարաւ մը ունիմ ու մարմինս կատարելապէս կորովի է : Ուտելու փափաք չեմ զգար բնա՛ւ դեկտ. 10ին, բայց միեւնոյն օրուան մէջ քանիցս բռնուն ախորժակ մը ունեցած եմ ճաշելու, կէս օրէն ետքը : Ամսոյն 11ին, անօթութիւնս դադրեցաւ յանկարծ : Ուժերս նուաղեցան զգալաբար, ահռելի ծարաւ մը զգացի, բայց ուտելու փափաք չունեցայ : Մինչև 18 միեւնոյն վիճակը կը տիրէ. սաստիկ ծարաւ, բայց ոչ անօթութիւն : Այդ օրուան ժամը 11ին կը հասնի կեանքիս տխուր վախճանը, «Մահը չի չարչարէր զիս. անօթութիւնը դադրած է բոլորովին... կեանքիս մնացած մէկ քանի վայրկեանները կը սահին մեղմօրէն, ինչպէս առուակի մը ջուրը գեղեցիկ ու հաճոյալի մարգագետնի մը մէջէն : Ծրագը պիտի մարի... իւղին չդուրս եկնէն» :

Եւ արդարեւ մահը տարաւ զինքը հագիւ երկու օր ետքը. տասներեօթը օր ապրած էր առանց փշրանք մը բերանը դնելու :

Անօթութիւնը կրնայ դառնալ կատարեալ ջլախտ մը, իր ամէն յատկանիւրովը : Անօթութեան պատրանքներ ու չափազանց անօթութիւններ կան, որոնք մարդկային գործարանաւորութեան, մարդկային յօրինուածքին մէկ իրական պէտքը չեն ներկայացներ : Չափազանց քաղց ունեցողը առաւելութիւն մը ունի շատակերին վրայ. քիչ մը բան կը բաւէ՝ իր անօթութեան զգայութիւնը անցընելու համար : Բայց շատակերը այդպէս չէ : Ուտելիքներու մեծ քանակ մը պէտք է իրեն համար : Թարատ անուն շատակերի մը պատմութիւնը գիտէք անշուշտ, թերթերը ասկէ մէկ երկու տարի առաջ շատ բաներ գրեցին անոր նկատմամբ : Տասներեօթը տարեկան եղած ատեն՝ Թարատ կը կշռէր 50 քիլօ, և քսանընթրս ժամուան մէջ կուտէր իր ծանրութեան հաւասար եղան միս : Քանի

մը տարի վերջ, հազիւ կրնար կշտանալ 15—20 մարդու ուտելիքով. նոյն իսկ այդ քանակը քիչ գալով՝ տկարացաւ ու Օթէլ—Տիէօի հիւանդանոցը գնաց, դարմանուելու համար համբաւաւոր բրօֆէսօր Տոքթ. Տիէօլաֆուայի ձեռքով: Հոն չորս հոգիի կերածը կը լափէր, բայց դարձեալ անբաւական կուգար. իր ձեռքին տակ ինկած կերակուրի բոլոր մնացորդները կուլ կուտար:

Քիչ ատենէն՝ Հիւանդանոցին մէջ գըտնուող բոլոր շուններն ու կատուները կերաւ հում հում և նոյն իսկ կենդանի: Մարդկային ցեղի այս հետաքրքրաշարժ նմուշը Օթէլ—Տիէօյի մէջ մեռաւ ուռական աղետապէս (tuberculose intestinale), գարշելի հոտ մը տարածելով իր շուրջը:

Անօթութիւնը՝ երբեմն քանակի երբեմն ալ որակի տեսակէտով ի յայտ կուգայ: Շատ մը անձեր, այնպիսի շրջանի մը մէջ գտնուած են, ուր կը փնտռէին գրգռիչ ուտելիքներ, ինչպէս վարունգի աղածոյ, պղզպեղ, քացախ: Ջրարիւնոտները, յղի կիները, տղայք յաճախ արտակարգ ակորթներ կ'ունենան ածուխ, գաճ ու մոխիր ուտելու, որիչներ աւելի հեռուն կերթան:

Բայց այս ուտելիքները անդարար չեն բնաւ և մարդկային գործարանաւորութիւնը պէտք չունենար անոնց: Ակներեւ իրողութիւն մըն է թէ, անօթութիւնը ջլախտային նկարագիր մը ունի:

Ախորժակի բացակայութիւնն ալ ջլախտային է: Շատեր չեն գիտեր անօթութեան ինչ ըլլալը: Ախորժակի բացակայութիւնը առաջին ակտանշանն է հիւանդութեան մը, որ երեւան ելած չէ դեռ: Ախորժակի զգայութիւնը յաճախադէպ է ջլախտաւորներուն մօտ: Անօթութեան պէտքը ինչէ առաջ կուգայ: Չի գիտցուիր, բայց եթէ ախորժակի անհետացումը ամբողջական ու տեւական (բոնիկ) ըլլայ, այն ատեն այնպիսի երեւոյթներ առաջ կուգան, որոնց առջև իրաւամբ կը շուարի կը մնայ է՛ն հմուտ, է՛ն փորձ բնախօսն իսկ:

ՏՕՔԹ. Տ. ԱԼԼԱՂՎԵՐՏԻ ՈՐԴԻ
(Բժիշկ)

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ազգ. Կեդրոնական Վարժարանի Խնամակալութիւնը կը ծանուցանէ թէ վարժարանին նոր տարեշրջանը կը սկսի յառաջիկայ Սեպտեմբեր 5, Երկուշաբթի օր: Ա. կարգը մտնել փափաքող աշակերտները կը հրաւիրուին ներկայանալ Ղալաթիոյ Խորհրդարանն ամէն օր, մինչև ժամը 3½, ըստ Թրքաց, արձանագրուելու և ստանալու համար մօից քըննութեանց ծրագիրը: Պատ. Ուսումնական Խորհրդոյ կողմէ վկայուած չըջանաւարտներն առանց քննութեան կ'ընդունուին:

Մօից քննութիւնները պիտի կատարուին յառաջիկայ Օգոստոս 30՝ Գշ. և 31՝ Գշ. օրերը, ժամը 1½ին (Բ. Թ.):

Իսկ Կեդրոնական Նախակրթարանի բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Օգոստ. 20, Երկուշաբթի օր: Հետեւաբար կը հրաւիրուին թէ՛ հին և թէ՛ նոր գալիք աշակերտները մինչև նոյն օր ամէն առաւօտ ներկայանալ Ղալաթիոյ Խորհրդարանը՝ արձանագրուելու համար: Նոր գալիք աշակերտք պարտաւոր են ի ձեռին ունենալ պատուաստի, ծննդեան և ելած վարժարանին վկայականները:

Ի դիմաց Խնամակալութեան

Ասեմադպիր	Ասեմապետ
Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ	Յ. ԷՍԱԵԱՆ
30 Յուլիս 905, Ղալաթիա	

ՌՕՊԵՐԴ ԳՕԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի սեպտ. 1/14ին: Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղաձցուած կատարելութեամբ աւանդելու համար: Վարժարանիս մասնաւոր բժիշկը ուսանողներու առողջութեան, մարմնամարզներու և խաղերուն, ինչպէս նաև վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ: Մարմնամարզի նոր և զեղեցիկ մասնաւոր շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն: Երկու տարիէ ի վեր բացուած է նաև փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, ուր կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշակերտներ:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ. — Ոստիկանութեան թարգման Պետրոս Սէզայի էֆ. ի որդին՝ Յարութիւն էֆ. Սիրունեան որ վերջերս իտալիայէն մայրաքաղաքս եկաւ, Մ. — Ռափայէլեան վարժարանի ուսումնական չըլանը մեծ յաջողութեամբ բոլորած և վեց տարի գծագրութեան և քանդակագործութեան հետեւած է. գծագրութիւնն ուսած է վենետիկոյ գեղարուեստից բարձրագոյն վարժարանին մէջ, իսկ քանդակագործութիւնը՝ ասպետ Գատորինի համբաւաւոր քանդակագործին քով: Յարութիւն էֆ. քանիցս գնահատման ու պարգեններու արժանացած է, ստանալով նաև Ա. կարգի վկայական:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ամերիկեան հսկայ բարեգործութեան մը լուրը բերին շաբթուս մէջ, եւրոպական թերթերը: Մր. Րոքֆէլլըր, քարիւղի իշխանը, մօտեցաւ պիտի իրականացնէ՝ Շիքակօն աշխարհի կրթական մեծագոյն կեդրոններէն մէկն ընելու ծրագիրը, այդ քաղքի Համալսարանին նուիրելով տասը միլիոն սղէրլին: Համալսարանին նախագահ Տոքթ. Հարբըր այցելելով Մր. Րոքֆէլլըրի, ուսումնասիրելու վրայ է նուիրատուութեան ծրագիրը: Նոր Աշխարհի մամուլը գովեստով կը հռչակէ կրթասիրական եռանդը Ամերիկացի միլիառատէրին որուն այս նոր նուիրատուութեամբ դաստիարակութեան և բարեգործութեան նպատակով ըրած հանրային նուիրատուութեանց գումարը կը հասնի 18,000,000 անգլ. ոսկիի: Մր. Բարնէկիի հանրագումտ նուիրատուութեանց գումարն ալ 20 միլիոն է: Բայց հաւանօրէն, զիրար գերազանցելու համար, նորանոր առատաձեռնութիւններ ալ ընեն: Միլիառատէրի մրցակցութիւն:

* * Բովանդակ աշխարհի ուշագրութիւնը սեւեռած է՝ այս պահուս Բօրթամաութի վրայ ուրկէ անհաշուելի հեռագիրներ կը տեղան թղթակիցներու և գործակալութեանց կողմէ, Ռուսեմաքոնական պատերազմի հաշտութեան բանադնացութեանց վրայ: Պ. Պ. Բօմուրաի և Ուիթէի ամէն մէկ շարժումը, նիստուկացը, իօսուածքը, ճաշը, պտոյտը՝ թղթակցութեանց

նիւթ կը կաղմեն: Ամերիկեան ծովեղերեայ այդ փոքրիկ քաղաքը՝ Բօրթամաութ՝ որ իր ամառանոցի սովորական հանգամանքը կորսնցուցած՝ քաղաքական լուրերու կեդրոն մը դարձած է հիմայ, ամէն օր կը ժամանեն հարիւրաւոր այցելուներ:

Պատուիրակները երբ Ուիթութուորթ — Օթէլ իջեւանեցան, առաջին անգամ ճաշասրահին մէջ կը ճաշէին. բայց հոն ծխելը արգիւտած ըլլալուն, Պ. Ուիթէ իրեն և իր ընկերակիցներուն համար մասնաւոր սրահ մը ուղեց առաջին յարկէն, և ալ սեղանատուն չիջներ. այնպէս որ, այցելուները և այցելուհիները որոնք կըսպասէին ճաշի ժամուն տեսնել ռուսական պատուիրակը, յուսախար կը մնան. բայց, նորէն կըսպասեն անոր դուրս ելլելուն, գէթ անգամ մը նշմարած ըլլալու համար զայն. իսկ Պ. Բօմուրա ու ընկերները ճաշասրահը կը ճաշեն. ճարտական առաջին պատուիրակը սեղանի վրայ ու երթուղարձի ատեն միայն կը տեսնուի, բայց անմերձենալի է. իր օգնականը՝ Պ. Թաքսիրա՝ սովորաբար խուլ, աւելի ևս խուլ է... օթէլը վիտացող օտար թղթակիցներուն հանդէպ: Շահեկանութենէ զուրկ չէ սա պարագան, թէ մինչդեռ ռուս մամուլը երկու կարեւոր թերթերու թղթակից միայն ունի Բօրթամաութի մէջ, ճաքոնները իրենց լաւագոյն օրագրողներէն տասներկուքը ղրկած են հոն:

Ուիթութուորթ — Օթէլը փայտաչէն մեծկակ պանդոկ մըն է, 500 հոգի պարունակելու բաւականաչափ. բայց 700 հոգի իջեւանած են և ղիւրին է երեւակայել թէ ինչպէ՞ս կը տեղաւորուի այս բազմութիւնը. ամէնէն անհաճոյ կողմը՝ գիններուն տարապայման սղուութիւնն է: Նոյն իսկ ձրի հայթայթուելիք առարկաներուն մասնաւոր գիներ որոշուած են. օթէլի բնակիչներուն կօշիկները կը ներկուին... զոյգը 1.25 ֆր.ի:

* * Եղեռնական հեշակաւոր դատ մը, որ գրեթէ մէկ տարի է ի վեր կը տեսնուէր Ռուսալիոյ մէջ, հետաքրքրելով ամբողջ եւրոպական մամուլը, անցեալ շաբթու վերջացաւ Միլանի եղեռնադատ ատենին տաջև որ արձակեց իր վճիռը: Ահաւասիկ ոճրին պատուութիւնը համառօտիւ, զոր մեր օրաթեր-

թերն ալ յիշած են ժամանակին. — 1902 Օգոստ. 28ին կոմս Պօնմարթինի սպաննուած գտնուեցաւ Պօլոնեը, իր տան մէջ: Սպանութենէն առաջ ահռելի կոիւ մը մղուած ըլլալու էր, որովհետեւ դիակին գտնուած սենեակը տակն ու վրայ էր: Ոստիկանութիւնը թէեւ իսկոյն գործի սկսաւ չարագործները գտնելու, բայց չյաջողեցաւ: Օր մըն ալ, Բրօֆէսօր Մուրրի, սպանեալին աները, Պօլոնեի դատաւորներուն ներկայանալով՝ ամբաստանեց իր որդին՝ Թուլլիօ Մուրրին իբրեւ ոճրին հեղինակը: Թուլլիօ Մուրրի արտասահման դացած էր, բայց իտալական կառավարութիւնը բերել տուաւ զաչն: Յաջորդական քննութիւններ ցոյց տուին թէ ուրիշներ ալ մատ ունին ոճրին մէջ, և այսպէս ձերբակալուեցան Թուլլիոյի հոմանունին եղող Բօզինա Պօնէթի սպասուհին, Տօքթ. Նալտի, սպանեալին կինը՝ կոմսուհի Պօնմարթինի և քանի մը ամիս վերջ ալ կոմսուհին հոմանին՝ Տօքթ. Բարլօ Սէքի:

Դատաւարութիւնը նկատ 1904 հոկտ.ին և անոր ամէնէն տառամարիք դրուագներէն մէկը, որու միջոցին 40ի չափ վկաներ լըսուեցան, Թուլլիօ Մուրրիի խոստովանութիւնն էր, թէ ինքը սպաննած էր կոմս Պօնմարթինին՝ վրէժը լուծելու համար իր քրոջ, որուն հետ իբր թէ շատ գէշ կը վարուէր սպանեալը:

Կոմսուհի Թէօտօլինա Պօնմարթինի իտալացի հոգակաւոր ակնաբոյժ և ձերակուտական Բրօֆ. Անթօնիօ Մուրրի աղջիկն է: Իրենց տան բարեկամներէն էր Տօքթ. Սէքի, բրօֆէսէօրին սիրական աշակերտը որ կոմսուհին հետ համակիր յարաբերութիւններ ունէր: Նոյն իսկ ատեն մը խօսք եղած էր ամուսնացնել զանոնք, բայց յանկարծ բարեկամութիւնը խզուեցաւ, և վերջապէս անծանօթ պատճառով մը Սէքիի արգելուեցաւ բրօֆէսէօրին տունը յաճախել:

1891ին, երբ Թէօտօլինա Մուրրի այցելութեան դացած էր Բատուա՝ քանի մը բարեկամներու, հոն հանդիպեցաւ կոմս Պօնմարթինիի, ազնուապետական ընտանիքի մը գեղադէմ շուաւիղին, և կարճատե դար-

պասէ մը ետք ամուսնացան: Երկու զաւակներ ծնան այս ամուսնութենէն: Բատուայէն երբ Պօլոնեը փոխադրուեցան, ամուսինս սէրը սկսած էր պաղիլ արդէն: Այդ միջոցին Տօքթ. Սէքի դարձեալ երեւան ելաւ, կոմսուհին հետապնդեցաւ ու վերջապէս անոր տարիածուն եղաւ:

Պահ մը կոմս և կոմսուհի Պօնմարթինի իրարմէ բաժնուեցան, բայց 1902 Ապրիլին, սպանութենէն քանի մը ամիս առաջ, հաշտութիւն գոյացաւ մէջերնին, թէեւ առերեւոյթ կերպով, որ չէր կրնար վերահաստատել դժբախտ զոյգին ընտանեկան երջանկութիւնը: Կոմսը երթալով անտանելի կը դառնար եւ յայտնի բարեկամութիւն մը ցոյց կուտար իր կնոջ սպասուհի Ռօզինա Պօնէթիի համար: Ամէն օր կոիւ, կազ և արցունք, եւ կոմսուհին իր նեղութիւնները կը պատմէր իր եղբօր՝ Թուլլիօ Մուրրիի:

Այս պահուս էր որ Թուլլիօ միտքը դըրաւ իր քրոջ ամուսինը մէջտեղէն վերցընել: Իր խոստովանութեան համեմատ, գործին վրայ խորհրդակցեցաւ Տօքթ. Սէքիի հետ, եւ յետոյ իրենց եղեռնական խորհուրդին մեղսակից առին Տօքթ. Նալտին եւ սպասուհին:

Կոմս Պօնմարթինի իր կինը արտասահման պիտի դրկէր, բայց քանի մը օր վնեւտիկ անցուցին: Օգոստ 28ին կոմսը Պօլոնեը դարձաւ, ուր տեղի ունեցաւ սպանութիւնը:

Միլանի եղեռնադատ ատենանը, ինչպէս ըսինք, անցեալ չարթու արձակեց իր վճիռը, նկատելով Թուլլիօ Մուրրին ու Տօքթ. Նալտին իբրեւ կանխամտածութեամբ սպանիչ և դատապարտելով զանոնք երեսունական տարուան մենաւոր բանտարկութեան: Միւսները մեղսակից նկատուեցան ոճրին եւ դատապարտուեցան, Լինտա Պօնմարթինի կոմսուհին ու Տօքթ. Սէքին՝ տասնական տարուան, և Բօզինա Պօնէթի սպասուհին եօթը տարուան մենաւոր բանտարկութեան: Իտալիոյ դատական տարեգրութեանց մէջ այս եղեռնական տաւա՛րն դատաւարութիւնը ամէնէն երկարատեւը եղած է, որուն յարուցած հանրային հետաքրքրութիւնն ալ եղական կրնայ համարուիլ:

ՍՏԱՑԱՆՔ երկու նոր հրատարակութիւններ. — ԿՐՈՆԻ ՈՒՍՈՒՄ. պատկերազարդ, տարրական և միջին դասընթացք, հեղ. Դաւիթ էֆ. Յալկոնց: — Գաղթնիք գեղեցկութեան, առողջութեան և երկայնակեցութեան, հեղ. բրոֆ. Պոյտ Լէյնըրտ, թարգմ. Սամուէլ էֆ. Կ. Վարժապետեան: Յ. Մատթէոսեան Տըպարանէն յաջորդաբար հրատարակուած սոյն երկու նոր գործերուն առաջինը (Ա. և Բ. հատոր) կրօնի դասագիրք մըն է, դպրոցներու յանձնարարելի, և երկրորդը՝ ամէն սեռի ու հասակի ընթերցողներու ձեռքը տրուելիք զբօսալի և օգտակար գիրք մը:

ՄԵԽԻՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Քաղկեդոն-Մոսա

Կը բացուի Սեպտեմբեր 5ին (ըստ Ն. Տ.): Այս հաստատութեան նպատակն է ապահովել աշակերտներուն բարոյական և մտաւորական կրթութիւն մը՝ տոհմային պահանջումներու համաձայն: Առ այս, բացի Միաբաններէ՝ որոնք վարժարանի վարչական մարմինը կը կազմեն, ունի մայրաքաղաքիս հայ և օտարազգի լաւագոյն ուսուցիչներու գործակցութիւնը, որոնցմով կը կազմուի քսան հոգիէ բաղկացած ուսուցչական խումբ մը:

Կ'աւանդէ հայերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն, լատիներէն և իտալերէն լեզուները, յատուկ վաճառականական դասընթացք և կրթարանական բոլոր ընթացիկ ուսումները, ինչպէս նաև գծագրութիւն, նկար, մարմնամարզ, ձայնական երաժշտութիւն, փողերգութիւն (fanfare) ևլն:

Աշակուղջ և հայրական հսկողութիւն մը կը տիրէ աշակերտաց բարոյականի և կրթութեան վրայ: Վարժարանս իր ծովահայեաց և օգասուն բարձր դիրքով՝ Պոլսոյ մէջ ամենէն հազուագիւտներէն մէկն է, և օժտուած է առողջապահիկ կարեւոր միջոցներով, որոնց մէջ այս տարի ևս նորութիւններ պիտի ներմուծուին:

Վարժարանիս ընթացաւարտները կրնան ուղղակի մտնել Եւրոպական Համալսարաններ, և ստուգիւ անոնց յարմարագոյններուն կ'ըլլայ այդ շնորհը՝ Միւթարեան վարժա-

րանաց ինամակալութեան կողմէ, անոնց ապագան լիուրի ապահովելու համար, ինչ որ մեծ առաւելութիւն մ'է Պոլսոյ միւս վարժարաններուն վրայ:

Վարժարանիս տարեկան զուտ թոշակն է Գիշերօթիկներուն համար 25 օսմ. լիրա: Աւելի մանրամասնութեանց համար դիմել վարժարանիս Տեսչութեան:

Վերատեսուչ Լ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ԹՈՐՈՍԵԱՆ
Գաղթէոյ - Մոսա

ՀԱՅՈՒՀԵԱՅ ՎԱՐժԱՐԱՆ ԱՏԱՐԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կը վարեն ինը անդամներէ բաղկացած ինամակալութիւն մը, և բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կը տրուի հայերէն և անգլ. լեզուներուն. կուսուցուին նաև թուրքերէն և ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու ընդարձակ և օդաւէտ շէնքերը, ինչպէս նաև ինամակալութեան երկու բօխիկ անդամները մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն առողջութիւնը: Անատուրի Երկաթուղին, որուն մէկ մասնագիծը մինչև քաղաքս կ'երկարի, ճամբորդութիւնը խիստ դիւրին և հաճելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնաւճարով պէտք է հատուցանել: Դաշնակի դասի համար 5 կամ 3 ոսկի կը պահանջուի, զաստուութեան թիւին համեմատ: Երգեսոնի դասի համար 2 ուկէս ոսկի կը պահանջուի: Վարժարանին ԻԱ. տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13 (Ն. Տ.) չորեքշաբթի իրիկունը: Վարժարանին նոր յայտագիրը ուղղողներուն ձրի կը զրկուի:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպլ Հաուս Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. էֆ. Գալալճեանի, ատենապետ ինամակալութեան, Ատաբաղար:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Տէր Է. ՏՂՈՐԿ—ՏՈՔԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԵՆԻԱ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

ՀԻՄՆԵԱՆ Ի ԲԱՐԻՉ 1875ԻՆ

Կը գործէ ուղղակի ճրանգ. կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ

Ընթացիկ ապահովգ. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Իրամագլուխ եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.
Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
ԱՐԱՄ Ս. ԳԱԼՖԱՆԱՆ

Պոլիս, Հանգրուց խան 50. 53
Դաւառները պատուար գործակալներ կը
փնտռուին: 22—50

ՆԱԶԱՐԻԹ ԽԱՉԷՐԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Պոլիս. Մարբուճնոյար. Պարնաքան խան
Թիւ 26

Այժն կարգի դասեր կը ստանձնէ եւ
խնդրոյ առաւելաւ եղած գործերու համար
թէ՛ քննադատի եւ թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք
կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
դասերու եւ առեւտրական ու օգտակար
պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:
Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձեռնա-
բար հարկերէն զուտիւն կը կատարէ եւ կար-
ծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու
եւ ի մասնաւորի կենցիկի ապահովագրական
բնկերութեան նկատմամբ անհրաժեշտ եղող
տեղեկութիւնները ձեռնարկ կուտայ:

Կը յանձնարարէ ու մինչեւ որ այս մասին կա-
րենար եղած տեղեկութիւնները իրմէ չստաց-
ուին. ապահովագրութիւն չի ստորագրուի:
Ապահովագրական փութակ հասանցման գու-
մարներու եւ փոխարժէքներու գանձումը
եւս կը ստանձնէ: 11—40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ
Գե. Նե. Շք. օրերը առաւօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11½
Բե. Գե. Ուր. օրերը ճեն մինչեւ 11½
Նիքա կի օրերը ժամացրութեամբ 9—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻԲՍ”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ

ՅԸ ՊՈՐԹԷ Ի ՊՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ՈՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Իրամագլուխ եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,

ՖԻՆԻԲՍ ոսկի հրդեհի դէմ Ապահ-
վագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ
իր պատուաւորութեամբ եւ փութակ մէջ
իր անմիջական վճարումներով:

ՖԻՆԻԲՍ կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ մէկն առաւել անշարժ եւ
շարժուն ստացւածք, յայտնաբերուող
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Յ՝-դ վճա-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
ոսկի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ դաւա-
ռաց. Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիթայիս խան, Պանֆ Օթումանի փոյ
Ղալաթիս:

Փոխ գործակալը ի Պոլիս

ՌՈՒՐ. ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԻՔԷԵԱՆ
Էմին պէյ խան Ֆեսլիեան խան

Զինի յիգդերու
Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

1—10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828- 1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	Քր.
1902ին գանձուած ապահովագին	24,000,000	»
Դրամադրութի երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամադրութի	21,500,000,000	»

Կ Ե Ն Օ Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամադրութի եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոյց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւոյ: Նպաստաւոր պայպաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեանը ԶԵՐԾ են այն վնասներէն եւ լուսնաւորութիւններէն, որոնց կենթարկուին միշտ ան անձինք, որ շահաբաժիններու բարգիւն (accumulation d'es bënëfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ գրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան ղրամատուցման Ե ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Գաբրէր Օղլու

Մասնաճիւղ Ղալաթիա, Ինայէթ Սան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

3-10

ՖԷՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՋՆԱԾՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՄԱԿԱՆ, ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՐԾՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԷՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւորն է Ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօն

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենյակ, Պոլիս, Ալեքանդր խան,

3-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԵՐՃԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհարեղեցներու, ամեն տեսակ կահ կարասիներու եւ ամենեւն անոստել

հագուստներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճոխացնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում տալու նպատակաւ, ՈՍԿԵՐԶՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զտաւ. կիներու եւ այրերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յառուկ ԶԳԵՍՏԵՂԷՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆՆԵՐՈՒ (ձեղունի լամբաներ, օֆիսէներ եւ այլն.) ճոխ մթերանոց մը հաստատած ենք, խիստ դիւրամատչելի գիներով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր հաճախորդի յաճախորդները, որ հոճին դիմել վերայիշեալ վաճառատունները, ուրկէ անտարակոյս անհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարկւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարկւրին 5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած բայց անվնաս մնացած ըլլան՝ հարկւրին 10 զեղչով եւ կռուունին: Իսկ ապառիկ ծախուած եւ անվնաս մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարկւրին 15 զեղչով եւ կռուունին:

7—10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաճական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիջտ պատրաստ են:

ՄԵՇ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԳԵՀ. ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՇՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔի վրայ, եւ ՀՐԳԵՀի, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՇՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանա ապահովագրութիւն ՇՈՒԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵՆԱՌՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՇՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՎ, բուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում


355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս

63,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիո,

7—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարժ մեքենայի մնայ, քայց էական կէտն է լաւ մեքենայ մը սւնենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է, Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

Ս Ի Ն Կ Է Ր
ՄԱՍՆԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍԼԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՒՏԱՐ

Չարլը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարելաբար Երաւարտութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆալաֆներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

5—1

ԿԱՐԱՊԵՏ ԷՅ. ԻԻԻԻԻԻԻԻԻԻԻ ԹՐԳ՝	Արուարձանին աղան	3	15
մանած գիրքերէն հետեւեալները կը գըւ.	Հանրագիտութիւն օճիւրը	1	5
նուրն Տէր-Մինասեան գրատունը եւ մայրա-	Սկզբունք Բաղ. Տնտեսութեան	1	4
քաղաքիս միւս հայ գրավաճառներուն քով.	Ընտանեկան գաղափարներ	3	15
հասոք			9—10
Կարմիր մարդոց երգումը		2	10
Ընտանեկանը		2	15
Փարիզի ամուսնութիւնները		1	2
Թափառական Հրեայ		4	50